յորս հաստատեալ են իրաւունք նոցա ։ Ի վերջոյ ուրեմն հնազանդեցաւ փոխանորդն Լատինաց, և դատաւորն գրով հաստատեաց զիրաւունս Հայոց յայրին Ծննդեան՝ կատարել զայն ըստ առաջին սովորութեան. ١٠٣١ (1621) ։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Հակառակութիւն Լատինաց ։ Վանօրայք ընդունակողման ։ Խնդիր Վանաց Ս. Յակոբայ ։ Գնալն Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպօլիս ։ Հին Երուսաղէմի տունն անդ ։ Եկեղեցին Պղատու ։ Նորոգութիւն Եկեղեցւոյն Յովհաննու Աւետարանչի ։ Վերնատան երեք կամարքն ։

ԹԷՊԷՏ և այսպիսի երկար և ոգետանջ դատաստանաւ իբրու թէ յանդ եղ խնդիրն 'ի դատարանի, և Հայք տիրանալ կամեցան իրաւանց իւրեանց. սակայն չև ևս էր անցեալ ամսօրեայ ժամանակ, փութացին Լատինք օգնութեամբ Դեսպանին Գաղղիոյ, և վերստին առին հրովարտակ յԱրքայէ, և առաքեցին զայն յԵրուսաղէմ 'ի ձեռն զինակրի նորին, որոյ անունն էր Եուսուֆ աղա, գրաւել զամենայն Ս. Տեղիս, և արտաքսել զայլ քրիստոնեայս, զի այնպէս ծանուցեալ էին Արքայի, թէ այրն Ծննդեան Քրիստոսի 'ի Բեթղեհէմ, Գմբեթն տաճարի Ս. Յարութեան, Գերեզմանն և Պատանատեղին Քրիստոսի. և գերեզմանն Ս. Աստուածածնի, 'ի սկզբանէ անտի էն 'ի ձեռս Լատինաց. իսկ այլոց քրիստոնէից միայն է լուցանել զկանթեղս եւ զաշտանակս, և չունին զայլ իրաւունս ։ Եհաս ոստիկանն հրովարտակաւ յԵրուսաղէմ, եւ Լատինք ետուն զայն արձանագրել 'ի դատարանի, և ապա սկսան մեծամեծ պատարագօք և ընծայիւք որսալ զմիտս այլազգեաց, առ 'ի գրաւել զՍ. Տեղիս. լուեալ զայս Գրիգորի Պատրիարքի եւ միաբանացն Հայոց՝ չոգան առ դատաւորն և ազդ արարին նմա զանտեղի խնդիրն Լատինաց, որպէս գրեալ էր 'ի հրովարտակին, զի իւրաքանչիւր ազգ ունի սեփհական վանս և զեկեղեցիս՝ ասեն, եւ վասն այնց չիք հակառակութիւն 'ի միջի, իսկ չորեքին տեղիքն այնոքիկ հաւասար են ամե-